

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՅՎԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: Սկսած 2019 թվականից իրականացվել են աշխատանքներ ապահովագրական ծածկույթի գնահատման, հիմնական ծառայությունների փաթեթի որոշման, համակարգում ըստ բնակչության առանձին խմբերի ծախսերի որոշման ուղղությամբ: 2019 թվականին հանրային քննարկման է ներկայացվել ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառվել է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների և նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակում/վերանայում, ինչպես նաև դրանց հաշվարկում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փորձարկման փուլի ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է առողջապահական տվյալների վերլուծության խորհրդատվության իրականացում համապատասխան մասնագետների ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով առողջապահական տվյալների վերլուծության խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրման հետ կապված առողջապահական տվյալների վերլուծության խորհրդատվության տրամադրում, այդ թվում

1. Բժշկական կազմակերպությունների տվյալների բազաների կառուցվածքի, ֆորմատի և ընդհանրացման հնարավորությունների վերաբերյալ խորհրդատվություն:

2. Տվյալների բազաներում կարգավորումների նշանակում, ըվյալների աղբյուրների հղումների տեղադրում, լրացուցիչ տվյալների ներմուծման ավտոմատ հնարավորությունների նախատեսում:
3. Ելքային աղյուսակների նախապատրաստում, հիմնական տվյալների բազաներից ելքային աղյուսակներ տվյալների արտահանման ավտոմատացում և փորձարկում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները;

1. Բժշկական կազմակերպությունների տվյալների բազաների կառուցվածքի և ֆորմատի փոփոխություններ և նոր՝ ամբողջական տվյալների բազա :
2. Տվյալների բազա՝ համապատասխան կարգավորումներով, տվյալների աղբյուրների հղումների տեղադրմամբ, լրացուցիչ տվյալների ներմուծման համար անհրաժեշտ պայմանների շարադրմամբ:
3. Ելքային աղյուսակներ, որոնք կապված են հիմնական տվյալների բազաներին և արձագանքում են հիմնական տվյալների բազայում կատարված փոփոխություններին:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի/թիմի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱԶԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՅՆՋՆԵՐԸ

- բարձրագույն կրթություն մաթեմատիկայի, տվյալագիտության, տվյալների ավտոմատացման բնագավառում,
- Առնվազն 5 տարվա փորձառություն մեծածավալ տվյալների (big data) հետ աշխատանքի
- Առնվազն 3 տարվա փորձ տվյալների մշակման, վերլուծության բնագավառում գործող կազմակերպությունում

- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ տվյալների բազաների կառուցման, ձևաչափերի մշակման, տվյալների համադրումներ իրականացնելու պրակտիկ և վարժ ունակություններ
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: